



## Սեպտեմբերյան վարժություններ

1. Գրե՛ք նշված նախադասությունը և թարգմանե՛ք: Մեկնաբանե՛ք բոլոր բայաձևերը:



▶ Սի՛

2. Նախորդ նախադասությունը վերածնե՛ք՝ փոխելով եզակին հոգնակիի և հակառակը:

▶ Սի՛

3. Ցույց տվե՛ք **հարցուք** բայաձևի անցյալ կատարյալի ցոյական հիմքը:

▶ X

4. Անկատար անցյալը դարձրե՛ք անցյալ կատարյալ:

4.1. Շարժերի գերկիր եւ խռովեցուցանեիր գաա:

▶ Շ

4.2. Շարժեր գևա իբրեւ գեղեզն ի հողմոյ:

▶ Շ

4.3. Շարժին զգլուխս իւրեանց:

▶ Շ

5. Առաջին ապառնին դարձրե՛ք երկրորդ ապառնի:

5.1. Կոչիցե՞ս զմեզ բարբառով:

▶ Կ

5.2. Եւ ապա կոչիցես զիս և լսիցեմ քեզ:

▶ Եւ

5.3. Կոչիցեմք զաղջիկն եւ հարցանիցեմք ի բերանոյ նորա:

▶ Կ

**6.** Վերականգնե՛ք գրաբարյան բնագիրը:

«Ուզում ե՞ս [*կամիս*], որ (հ)եբրայեցիներից կին մի դայակ կանչեմ [*II ապառնի*], նա (քեզ համար) կերակրի [*սնանիս* բայի պատճառ, I ապառնի] այդ մանկանը»:

- Ապա մեկնաբանե՛ք I և II ապառնիների նրբիմաստային տարբերությունները:

▶ Կ

**7.** Վերականգնե՛ք հետևյալ բայերի՝

- ա) հենց այս սահմանական ներկայի 1եզ. ձևերի հնագույն հայկական նախաձևերը.
- բ) դրանց արմատների հնդեվրոպական նախաձևերը (հիմնավորե՛ք ձեր վերակազմությունները):

**7.1.** բառնամ

▶ \*... < հնդեվր. ....

**7.2.** դառնամ

▶ \*... < հնդեվր. ....

**7.3.** զգենում

▶ \*... < հնդեվր. ....

**7.4.** մաղթեմ

▶ \*... < ... < հնդեվր. ....

NB! Հուշում-հիշեցում վերջինի վերաբերյալ. հնդեվրոպական բայարմատի նախաձևն է՝ \**meldʰ*-:

**8.** Ինչո՞վ են միավորվում /*h* խոնարհման հետևյալ գոյականները. վերակազմե՛ք ու հիմնավորե՛ք:

**8.1.** առու

▶

**8.2.** բայ

▶

**8.3.** բարդ

▶

**8.4.** գիւտ

▶

**8.5.** մաղթ

▶

**9.** ՇԱՐԱԴ(Ա)՝ զավեշտական բառախաղ

- ա) Հնդեվրոպական մի լեզվում՝ հինգտասանոց բառ, որի բնիկ հայկական ցեղակիցը երեքտասանոց է և սկսվում է *h*-ով.

- բ) Այդ լեզուն կրող մի հռչակավոր արվեստագետ (18-րդ դար)

Ա + Բ = 19-րդ դարի հռչակավոր գիտնական՝ վերոհիշյալի համերկրացին:

Անվանե՛ք վերջինիս:

▶ X

**10.** Հայերեն *առաւել* բառի բարբառային իմաստներից մեկն է՝ *արտի ծայրի անվար (չվարած) մնացած մասը*: Ժողովրդական արվեստի ո՞ր իրողության անվանումն է կազմված մի ձայնարկությունից ու վերոհիշյալ բառից: Բացատրե՛ք այդտեղ արտացոլված ձայնավորային հնչյունափոխությունը:

▶ X

**11.** Մենք գիտենք, որ արդի հայերենի գոյականներն ուղղագրական ու ձևաբանական (հոլովման կարգ) առումներով հաճախ են տարբերվում իրենց գրաբարյան հին ձևերից: Օրինակ՝ արդի արևելահայերենում *ազգ, բան, գործ, եղեգ, ծով* և *քաղաք* բառերը բոլորն էլ պատկանում են *h* հոլովման (սեռականը կազմում են *-h* վերջավորությամբ՝ *ազգի, բանի, բոցի* և այլն), այնինչ գրաբարում դրանք բոլորն ունեցել են իրարից տարբեր հոլովումներ (*ազգ-ա-ւ, բան-ի-ւ, գործ-ո-ւ* և այլն): Դրանք գուշակել հնարավոր չի, պարզապես պիտի սովորենք:

❓ ՀԱՐՑ. Ո՞րն է գրաբարյան այն շատ կոնկրետ ու կոռ տեքստային խումբ-համակարգը, որտեղ ներկայացված են ստորն թվարկված արևելահայկական գոյականների գրաբարյան հին հոլովածները, որոնք վճռորոշ են դրանց գրաբարյան հոլովումներն իմանալու և մտապահելու համար: Ընդ որում՝ ընդգծում եմ, այդ տեքստային վկայությունները լրիվ բավարար են այդ գոյականների հոլովակարգերը հստակ իմանալու համար.

*ազգ, ապարանք, արեգակ, ավերակ, բան, բարձ, բյուր, բլուր, բոց, գետ, դուստր, եղեգ, եղջերու, զարմ, ծով, հազար, ստրուկ, վիշապ, քաղաք, քաջ, քեն:*

Ներկայացրե՛ք ու բացատրե՛ք այնտեղ վկայված հոլովածները:

▶ X

**12.** Հնդեվրոպական լեզուներից մեկն ունի *brun-* հիմքով ու ջրային իմաստով մի բառ, որ սերում է հնդեվրոպական չեզոք սեռի մի գոյականից: Անվանե՛ք վերջինիս հայկական ժառանգը՝ որ տեսքով շա՛տ է տարբերվում վերոհիշյալ ցեղակցից, բայց հստակ բացատրվում է ձայնդարձով ու «զարմանալի» բառավերջով և արտացոլում է հայերենի համար լրիվ կանոնավոր հնչյունափոխություններ:

▶ X

Հրաչ Մարտիրոսյան

05.10.2021 Բեռլին / Լեյդեն

Վարժություններից մի քանիսի գաղափարները-հենքերը դրվել են Բեռլինի S-Bahn գնացքներում: :)